

արել շրջապատող ժողովուրդների վրա! և սրա պատճառը ոչ սակաւ նրանց բնաւորութեան եսական ու անհատական կողմն է: Գաղթականները վերաբերում են դէպի բնիկները մեծ մասամբ արհամարհանքով. նրանք նրանց վրայ նախում են որպէս հասարակ բանուորական ուժի, որ պէտք կը գայ հնձի, խոտհարի կամ ալգու շտապ աշխատանքների ժամանակ վարձելու և կամ որպէս թշնամի—գիշատիչի, որից պէտք է մեծ ջանքով պահպանել իրենց դաշտերն ու այդիները \*):

## Հ Ա Յ Ե Ր

Գանձակի գաւառի հայ բնակիչների մեծագոյն մասը բնիկներ են՝ իսկ փոքրագոյնը՝ գաղթականներ Պարսկաստանից, Զիվանշիրի, Երեւանի և Ղազախի գաւառների գիւղերից: Ո՞չ միայն բնիկներն ու գաղթականները, այլ և Գիւլիստանի վիճակի և արևմտեան մասի բնակիչները միմեանցից բաւական տարբերում են թէ բարբառով և թէ սովորութիւններով: Գիւլիստանի վիճակը աւելի նման է Վարանդացին, (Ղարաբաղին), որի հետ պատճական բաւական սերտ անցեալով կապուած է եղել:

Բնիկներն ընդհանրապէս աւելի քան միջահասակ են, իսկ մելիքական և հոգեորական դասերի մէջ շատ յաճախ պատահում են բարձրահասակներ:

Հասակի միջին բարձրութիւնը հասնում է 1657 միլիմետրի, փոքր ինչ ցածր Բագուի (1668) և Թիֆլիսի (1658) հայերից, բայց բարձր միւս գաւառներից:

Կրծքի միջին շրջապատը հասնում է 847 միլիմետրի, 21 մմ. աւելի բարձրութեան կիսից, փոքր ինչ աւելի Թիֆլիսի (840) և Բագուի (844) հայերի կրծքերից, բայց պակաս՝ միւս գաւառներից, ինչպէս Զանգեզուրի (852), Զիբրայիլի (822) և այլն. Կուրծքը պատած է սև, խիտ մազերով:

Գլխի ձեւը երկար է, 177 միլիմետր երկ. և 156 լայն. քիթը երկար (59,, մմ.) և նեղ (31,,). աչքերը սև, ճակատը ուղղահայեաց:

Աւելի տեղեկութիւններ չենք կարող տալ, որովհետև մարդա-

\*) Օգտուել եմ հետևեալ աշխատութիւնից. Экономический быт немецких колонистов въ Закавказскомъ краѣ. Никифорова, въ „Материалахъ для изученія экономического быта государственныхъ крестьянъ Закавказскаго края. т. I. ст. 99—106.

բանական հետազոտութիւններ այս տեղացիների վերաբերութեամբ կատարուած չեն հմուտ բժիշկների կողմից, բացի պ. Պանտիլյոսից \*), իսկ սրանը հիմնուած են միմիայն միքանի հարիւր մարդկանց չափումների վրայ. Բնաւորութեամբ եսասէր և հեշտասէր են. ղարաբաղցիների հետ համեմատելով՝ սրանք աւելի պակաս աշխատասէր են, բացաւելի կոպիտ, չունին նրանց նախաձեռնող ոգին և ոչ էլ նրանց ընդունակութիւնները:

Մտաւոր զարգացմամբ աննախանձելի են, ստոր զուշուց, թէև աւելի մօտ և երկաթուղիով կապուած Թիֆլիսի հետ. Սրա պատճառը, կարծեմ, նախ այն է, որ համեմատաբար տաք կիմավ և հեշտաբեր ազգիների շնորհիւ Գանձակեցին փոքր ինչ ծով է և երկրորդ՝ ապրուատի միջակ միջոցներ ունենալով՝ զուշեցու պէս ստիպուած չէ տարուայ մեծագոյն մասը ուրիշ քաղաքներ անցկացնել և վերադարձին բերել իւր հետ դրսի քաղաքակրթութիւնը. Նոյն իսկ քաղաքում մտաւոր անշարժութիւն է տիրում բացի այգիները ուռոգելու ջրի հերթի և այս պատճառով ծագած կոիւներից, ուրիշ գրեթէ ոչ մի խնդրի մասին չեն խմբւում և խօսում. Երիտասարդութիւն իւր վարդագոյն իդէալներով և աշխոյժ գործունէութեամբ գոյութիւն չունի ոչ գիւղերում և ոչ նոյն իսկ քաղաքում:

Գրագէտ կանանց թիւր շատ փոքր է, իսկ տղամարդկանցը հասնում է մինչև 7%.

Բարոյականութեամբ նոյնպէս լաւ չեն, կրօնը, շնորհիւ տղէտ և մանաւանդ թերուս և թերահաւատ հոգևորականների, բաւականաչափ կորցրել է իւր նշանակութիւնը. ընկած կրօնական հաւատալիքներին չեն փոխարինել բարոյական սկզբունքները, և սրանք թէ կրօնական և թէ բարոյական սկզբունքներից զուրկ մնացած՝ արագութեամբ դիմում են դէպի ապականութիւն. պանդխառութիւնը, բագուի շռապութիւնն ու զեղիսութիւնը, ամառանոց եկողների շուայտութիւնը և այն գայիս են շտապեցներու այդ բարոյական անկումը. Քաղաքին և հանքացին գործարաններին մօտիկ և առհաստրակ մեծ գիւղերը բարոյապէս շատ ընկած են և տանջլում են վեներական ախտերով. իսկ կենդրուններից հեռու գիւղերը բարեբաղդաբար փոքր ինչ լաւ են:

### Բ Ն Ա Կ Ը Ր Ը Ն.

Գանձակի գաւառը չունի իրեն առանձնայատուկ բնակարանին ձեւ, այստեղ կան թէ պարունակեր, որ յատուկ են ամբողջ Ղարաբաղին և մանաւանդ Զանգեզուրի Ղափան մասին \*\*), և թէ կանոնաւոր սե-

\*.) Անտրոպոլոգիկական համարական առաջարկ Կավազն. Տիֆլիս.

\*\*) Նկարագրութիւնը տես իմ „Զանգեզուրի գաւառ“-ում: